



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9922

655.2

5-97

655.2

5-97

Մ. ԵՓՐԻԿ

338

ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԵՐԻ
ՁԵՎԱՓՈԽՄԱՆ ԽՆԴԻՐԸ

(ՈՒՐՎԱԳԻԾ)

ԱՐՏԱՏՊԼԱԾ
«ՏԵԽՆԻԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ» ԺՈՒՐՆԱԼԻՑ
ՅԵՐԵՎԱՆ 1991

2002

655.2

5-97



2011

ՀԱՅԵՐԵՆ ՏՍՈՒՐԻ ԶԵՎԱՓՈԽՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Վերջին վեց-յոթ տարվա ընթացքում հայերեն տառերի ձևավորման խնդիրը բավականաչափ քննության առարկա չէ դարձել ու մինչև հիմա էլ չի ստացել վերջնական լուծում:

Առաջին անգամ այդ խնդիրը հրապարակ է դրվել հանդուցյալ Ա. Մրոսայանի (Լուսժողով) կողմից և քննության է առել այդ նպատակի համար ընտրված մի հատուկ հանձնաժողով, վորի անդամներն էին՝ Ստ. Լիսիցյան, Հակ. Կոջոյան (նկարիչ), Ա. Տեր-Հարությունյան (Արտյոմ-Գրո), Մ. Եփրեկ և Լ. Յաղուբյան:

Ապա ՀՍԽՀ Գիտությունների և Արվեստի Ինստիտուտին կից ընտրված և «Ուղղության և տառերի ձևի բարեփոխության հանձնաժողով», բաղկացած 11 անդամից (յեղավորներ, գեղանկարիչներ և գրականագետներ և այլն): Այդ հանձնաժողովն աշխատանքի չէ անցել 1926 թ. հոկտեմբերին ու իր աշխատանքներն ավարտել է 1927 թ. մայիսին:

Հանձնաժողովն իր աբսոլյուտության տակ յեղած ժամանակամիջոցում կատարած աշխատանքներն ամփոփում ու հրատարակում է «Տեղեկագիրը ԽՍՀՄ Գիտության և Արվեստի Ինստիտուտի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխության հանձնաժողովի» հաշվետու գիրքը:

Այդ որվանից անցել է մոտ չորս տարի, բայց իրական աշխատանք դեռ չի տարվել լուծելու տառերի ձևավորման արդեն հասունացած խնդիրը:

Այժմյան մեր տպագրի տառերի ձևավոր, վոր վերցրած է գլխավորապես հին և միջին դարերի ձևագրերի լիտերներից, լինելով կյերական-ֆեռգալական կուլտուրայի արտահայտություն, մեր այսօրվա կուլտուրական պահանջներին չի կարողանում ապավինել:

Ահա թե ինչո՛ւ:

Այս տառերը քեֆ են, սև, կոպիտ, շատ տեղ են բռնում (այսինքն տպած եջի վրա քիչ բառեր են պարունակում), արտաքին պատկերը շատ է շարժուն, աչքը չուտ հոգնեցնող:

Հայերեն տառերի նկարը լինելով շարժական — (այսինքն՝ և՛ 2, և՛ 3, (գետի վեր կամ վար) և՛ չորս գծերի մեջ) — աչքը միայն զիզապանելով և ստանում բառապատկերը. մեղ թվում է, վոր տարրեր գծերի ու չափերի մեջ լինելու պատճառով է, վոր աչքը չուտ է հոգնում. մինչդեռ որինակ՝ ռուսերենի ընթերցումը դյուրին է նրա լայն կորզուս ունենալու շնորհիվ. թեև ռուսերենը շարժական տառ քիչ ունի, բայց նրա լայն կորզուս (գետի վեր-վար), կիսակլոր շատ տառեր (ինչպես լատիներենն է) ունենալն ուժանդակում է արագ բա-

ռադատելիք ստանալուն: Ռուսերենի միայն վերին յերեք գծում գտնվում է ճ տառը, (բայց ընդ որով զիստառերից), վարի յերեք գծում, յերկու տղում ք ք և լրիվ չորս գծի, յերեք տղում փ տառը, հաշվի չենք առնում ճ և փ տառերը, վորովհետև սրանց հիմնական մարմինը տեղավորված է դարձյալ մնացած ընդ որ տառերի պես, միջին յերկու գծի մեջ: Նրանց վերջացող գծիկները նույնպես ուժանդակում են բառապատկերներին:

Ռուսերենի միաչափ կորզուս և կիսակլոր ձև, լայն ձուլածո (офко) ու նենալու շնորհիվ աչքը հանգիստ դրուլթյան մեջ ընդգրկում է բառապատկերը, հետևապես և բառը, իսկ հայերենն ընդգրկելու համար աչքը շարժվում, ավելի ճիշտ լարված վիճակում կատարում է բառապատկերի ընդգրկելու աշխատանքը:

Յեթե այս հիմնականում դժվար վիճակին ավելացնենք ներկա տառի քեֆ ձևը, վոր նույնպես անհանգիստ դրուլթյան մեջ է զցում աչքին և սև լինելը, վոր կոպիտ է, աչքը չի չույում — ապա այս տառերի լիտերները, տառապատկերը բարեփոխելու մասին յերկու կարծիք լինել չի կարող:

Չմոռանանք նշել, վոր թեքությունը վերացնելու դեպքում հնարավոր կլինի տաղատեղը սղմել, վորը կտա մեկ տողում 2-3 տառի տնտեսում 6 կվ. տարածության մեջ սովորական տառով (10-ի) չարելու դեպքում:

Ամենից առաջ պետք է վերացնել տառերի թեք ձևն ու դարձնել ուղղահայաց — վորի մասին արդեն ունեն վորոշում յերկու հանձնաժողովներն էլ, մանավանդ, վոր մենք ուղղահայաց վորոշ տառեր ունեցել ենք և այ-

ժամ ել ունենք գործածության մեջ:

Պետք է այժմյան միջին յերկու գծերի մեջ յեղած տարածությունը լայնացնել հասցնելով 2½—3-ի: Այս հանգամանքը կխոչորացնի տառերի կորզուսը, վորով տառերը կդառնան դյուրընթեռնելի, աչքն ավելի չուտ կընդգրկի բառապատկերը, հետևապես և բառը:

Կա նաև մի այլ հանգամանք. դատելի տնտեսումն է: Որինակ՝ այժմյան 10-ի տառի մարմինը թաղնելով նույն վիճակում (չափով), լայնացնելով նրա միջուկը տառը կարելի է դրելի ձուլել 8-ի վրա, վորի արդյունքն այն կլինի, վոր 5×8 չափով փոխանակ, ներկա դեպքում, տեղավորված 30 տողի, կստանանք 36 տող: Մեկ էջում 6 տողի տնտեսում այն ժամանակ, յերբ տառի մարմինը մեծացրված է: Մեր առաջարկած ձևերի նրմուլները կրեքենք հետո:

Այս հաշվին ավելի ուշելք լինելու համար բերենք մի համեմատական որինակ ու պարզ հաշիվ:

Յեթե մի գիրք ունի 5×8 դիրք, չարվածքը 10-ի տառով է, 100 էջ ծավալով՝ պարունակում է 3000 տող իսկ մեր առաջարկած վարիանտով (30-ի փոխարեն 36 տող), 100 էջոց գիրքը կդառնա 83 էջ: Իսկ յեթե 100 էջոց գրքի տիրաժը 8000 (սա Հայկոհհրատի միջին տիրաժն է) է, գիրքն իր նրպատակին ծառայելով լրիվ, և ավելի կուլտուրական տեսքով տպագրելով կտնտեսենք 2000 թերթ (72×110 սմ.) թուղթ, մի գրքի հրատարակության մեջ միայն:

Կունենանք չոչափելի ու անհրաժեշտ մի տնտեսում, վորի համար ժողովրդական տնտեսությունը հայերեն

գրքից կարող եմ շնորհակալ լինել միայն:
Անցնենք տառերի յեղած ձևերի
քննության:

Մեր տառերը գրված են չորս հա-
վասար գծերի մեջ (=====), մինչ-
դեռ լատիներենն ու ռուսերենը հավա-
սար չեն բաժանված (=====), այս
պատճառով ել սրանց տառերի ձուլա-
ծոն մեծ է, հեշտ ընթերցելի ու տեղի,
թղթի տնտեսումն ապահովված:

Բերենք նմուշներ:

ստատուս (st)

asnur (f)

Kacca (ф)

Այս դժանկարները պարզ կերպով
ճշտում են մեր ասածները:

Հայերեն տառերից միջին յերկու-
գծի մեջ գրվում են ասոռուս (==6),
վերից վար յերեք գծի մեջն են տեղա-
վորված և ժ ծ ճ ճ մ ն և (==9), վա-
րից վեր յերեք գծի մեջ յեղածներն են՝
բ գ դ զ ը լ զ յ չ չ չ բ ց ք (==13), լրիվ
չորս գծերի մեջ են՝ թ ի խ կ վ փ ֆ ջ
(==8):

Այսքան չատ տարբեր գծերի մեջ
գտնվող տառ մի այլ (յեվրոպական)
լեզվի լիտերում գծվար թե գտնենք,
բացի հայերենից:

Պետք է բարեփոխության շեշտը
դնել այս յերեքգծյա վերացնելու վրա:

Նոր ռեֆորմը պետք է հիմնովին լու-
ծի այդ խնդիրը, տառերին ու բառա-
պատկերներին տա նպատակահարմար
ու կուլտուրական տեսք:

Մեր առաջարկությունն է.

Տառերի հիմնական կորպուսի չափը
տեղավորել միջին յերկու գծերի մեջ՝
լայնացնելով այն՝ վերի և վարի գծե-
րի տարածությունը կիսով չափ նե-
ղացնելու հաշվին. որինակ՝

ստատուս (st)

Վերի և վարի յերեք գծերի մեջ
գրվող տառերի թիվը 22-ից իջեցնել
8-ի:

Որինակ՝ վերից վար յերեք գծում
գրել միայն հետևյալ տառերը՝

ժ մ ն

Պատճառաբանենք:

Ժ—իր նկարի բնութիւնով այս տառը
ափելի հարմար է տեղավորել վերի յե-
րեք գծի, այսինքն՝ յերկու տողի մեջ,
վարի կլորվող մասնիկն առնելով մի-
ջին տողում, իսկ վերից յեկող գծի 1/4
մասը պահել նույն վանդակում:

մ և ն — այս տառերի վերին ծայրե-
րը՝ մ—ի առաջ յեկած և ն—ի յետ ըն-
կած գծիկները հավասար տողի (2 գը-
ծում) մեջ լինելու դեպքում հարեման
տառերին հրում են առաջ կամ յետ,
այդպիսով տառերի մեջ մնում է ան-
հավասար տարածություն, վորի
պատճառով տողի կամ բառի պատկե-
րըն անհավասար է ստացվում, բա-
ռապատկերը ճեղքի յե հանդիպում:
Այս դրությունից ընթերցողին փրկե-
լու համար (որինակ՝ վերնագիր կամ

դեղարկեստական դործ շարելիս) տը-
պարանում ստիպված են լինում հատ-
կապես այս տառերի պատճառով մը-
նացած տառերի արանքը բաժանել բա-
ցատով (առաջս) . բերենք որինակ՝

ՄԱՍՍԱՆ ՄԻԱՍԻՆ

Վարի յերեք գծում պետք է թողնել
հետևյալ տառերը.

զ զ ը ց ջ

զ զ ը ց—սրանց իջնոց ու պոչով վեր-
ջավորում ունենալու պատճառով հիմ-
նական տառի կորպուսը պետք է թող-
նել միջին տողում. այդ տառերի բնո-
րոշ նկարը գլուխն է:

ր — նախ վոր ունի իջնող գիծ (թեև
դա այնքան էլ պարտադիր չէ) և յեր-
կորդ, վոր կարեվորն է ը և
ր տառերի սխալներից ազատ-
վելու համար գտնում ենք իր-
րև նպատակահարմար ձևը. ը դիտ-
մամբ պահում ենք միջին յերկու գը-
ծում, վորպեսզի վարի տողում յեղած
գծիկներով տառերի թիվը չափեցնել
(ըստ մեր հիմնական դրույթի):

Չորս լրիվ գծերի, այսինքն՝ յերեք
տողի մեջ թողնում ենք միայն յերկու
տառ՝

ի վ

Բացի մեր հիմնական նկատառումից
այս յերկու տառերը թողնելով լրիվ
տարածության մեջ վ և դ—ի, ի և ր—ի
տառապատկերներն ուժեղ շեշտված
կլինեն:

Այսպիսով մենք տարբեր տողերում
գրված, տարբեր տառաչափերով կու-
նենանք հետևյալ տառերը՝

Վերից յերեք գծում՝
ժ մ ն

Վարից յերեք գծում՝

զ զ ը ց ջ

և լրիվ չորս գծերի մեջ՝

ի վ

Ընդամենը տասը տառ, մնացած 26
տառերը կլինեն մի չափի մեջ՝ այ-
ժմյան կորպուսը մեծացրած դրու-
թյամբ:

Այդ տառերն են՝

ա բ գ դ ե ը լ խ ծ կ հ ձ ճ
յ շ ո չ պ ո ս տ ւ փ բ ֆ և
==26

Յերկարբառները պետք է միաց-
նել (որ. ու յու յա) ու կատարել մի
ձուլվածքով, այդ տառերը տպարա-
նում պետք է լինեն իրրև մի տառ:

Տողն ու բառը հեշտ պատկեր են տա-
լիս այն ժամանակ, յերբ ընդհանուր
պատկերներից վորոշ շեղում, վորոշ
նոր շտրիկ են ընկնում աչքին. մի քա-
նի տառեր թողել ենք շարժուն վիճա-
կում նրա համար, վոր պատկերի նո-
րույթ, թարմություն լինի, միապա-
ղաղ ու տաղտուկ դրության մեջ չլի-
նեն հայերեն գրքերը, վորի պատճա-
ռով կգծվարանար ընթերցումը, վոր
կնշանակի հակառակ արդյունքի կը-
հասնեյինք:

Թե ի՞նչ բնութիւն և ի՞նչ տառապատ-
կեր կունենանք մեր առաջարկած ձևն
ընդունվելու դեպքում՝ բերենք մեր
մշակած ամբողջ այբբենարանն իբրև
ռեֆորմի հիմք:

ԱՍՊԲԳԴԵԳԸԺԹԻՄԾԱԿԱՃՊ ՃԱՄՆՇՈՂՂՅՈՍՎՏՐԳԼՎԻՔՖ

ԱՍՊԲԳԴԵԳԸԺԹԻՄԾԱԿԱՃՊ

ՃԱՄՆՇՈՂՂՅՈՍՎՏՐԳԼՎԻՔՖ

ԱՍՊԲԳԴԵԳԸԺԹԻՄԾԱԿԱՃՊ

ՃԱՄՆՇՈՂՂՅՈՍՎՏՐԳԼՎԻՔՖ

ԱՍՊԲԳԴԵԳԸԺԹԻՄԾԱԿԱՃՊ

ՃԱՄՆՇՈՂՂՅՈՍՎՏՐԳԼՎԻՔՖ

ԱՍՊԲԳԴԵԳԸԺԹԻՄԾԱԿԱՃՊ

ՃԱՄՆՇՈՂՂՅՈՍՎՏՐԳԼՎԻՔՖ

Տառերը գծանկարել
և նանշոն

Այս պրոյեկտը կունենա վորոշ չքա-
կումները կարել, չենք կասկածում:

Այս նկատառումով էլ մենք՝ որի-
նակ՝ առաջին յերկու վարիանտ ենք
գրել, յերկրորդն առնելով փակագծի
մեջ:

Մեր բերած տառերի նկարներն ա-
մեն մեկն առանձին դեռևս յենթա-
կա յեն քննության ու մանրակրկիտ
ստուգման: Նրանց այստեղ դնելու
նպատակն է տալ ընդհանուր, սկզբ-
բունքային մոտեցման պատկերը:

Տառերի նկարները բերված են
հինգ չափով՝ 1. բնական (ինչպես նը-
կարված է), 2. կեզել 16-ի, 3. կեզել
12-ի, 4. կեզել 10-ի և 5. կեզել 8-ի:

Յեթե փորձենք այս տառերը չափել
հայերեն յեղած տառերի հետ՝ կըս-
տացվեն հետևյալ չափերը:

Նախագծի կեզել 8-ն այսօրվա տա-
ռերի կեզել 10-ի չափի (միայն չունի
նրա սեռությունը. անհրաժեշտ է մի
փոքր սեւացնել) 10-ը՝ 12-ի, 12-ը՝
14-ի և 16-ը՝ 18-ի:

Այս տեսակետից մեր նախագիծը
բավարարում է մեր տնտեսման թե-
ղին:

Հայերեն տառերի ընդունա-
պատկերները պահպանելու նպատա-
կով չենք զբաղվել նոր տառաձևեր ու
խորթ ելեմենտներ մտցնելու խնդրով,
այլ յեղածի վրա կատարել ենք մշա-
կում, վերացնելով մի շարք անկուշ-
տուրական (յեթե կարելի յե այսպես
ասել) անտնտեսական ելեմենտներ և
տեխնիկական թերություններ:

Թվում է թե այս նախագծի տառա-
պատկերները պետք է հիմնականում
բավարարի մեր պահանջները:

Գլխատառերը թեև չեն բերված այս-
տեղ, բայց նրանց վերաբեր-
մամբ կասենք, վոր պետք է գրվեն վե-
րին յերեք գծում — բոլորն անխոր:

Տառերի այս ձևով բարեփոխելը
հիմնականում վորոշելուց հետո, հեշ-
տանում են և՛ սե, և՛ չեղադիր, և՛ տի-
տուլի տառերի, և՛ դարձիկառա կադ-
մելու, և՛ գեղարվեստական տառա-
նկարներ մշակելու խնդիրները:

Մի քանի խոսք տառերի լիտերների
չափերի մասին:

Այս խնդիրը հաջող լուծում է ստա-
ցել վրացերեն նոր տառերի վերաբեր-
մամբ:

Այս հարցը կապված է ավելի շատ
արտադրական — տեխնիկական պրո-
ցեսների հետ:

Մեր աշխարհի լիտերները սպարա-
նում ունեն հետևյալ խայտարեկո
չափերը.

ա տ պ խ թ	7	պունկտ (10-ի տառ.)
փ ֆ	6 1/2	» »
ս ժ	5 1/2	» »
ծ	5 1/4	» »
ջ - լ հ	4	» »
շ	3 1/2	» »
չ	3 1/4	» »
լ ի	3	» »
՝	2 1/2	» »
՝	2	» »

խակմնացած տառերը 5-ական պունկտ:

Այս հանգամանքը խոշոր չափով
դժվարացնում է տպարանի շարված-
քի սրբադրությունը: Այս խայտարե-
ղետ չափերը վո՛չ միայն դժվարա-
ցնում ու արտադրանքի պրոցեսը յեր-
կարացնում են, այլև ստացվում է անո-
րակ շարվածք, անհավասար բաժա-
նում: Կոտորակային պունկտերը գրա-
չափին (վորն ստուգում է մատների
հպումով) խաբուսիկ դրության մեջ են
դրում, մինչդեռ դրանք մեքենայում,
տպագրելիս, տալիս են բացասական
հետևանքներ (ներկատու գլանիկը
թույլ տողերից տառը բարձրացնում,
կոտորում է կամ ամբողջ բառը թա-
փում):

Նոր ռեֆորմի ժամանակ պետք է
թողնել հիմնական չորս չափ — 3 4 5 6

պունկտ, յեղած 11 չափի փոխարեն:
Ի հարկե այդ չափերի համե-
մատականը պետք է պահել մյուս կե-
զելների տառերի նկատմամբ:

Մեր առաջարկած տառերի նկարնե-
րը վորոշելիս լիտերների չափի պրո-
լեմն ևս լուծված է:

Վերջնականապես պետք է լուծել
հայերեն տիտուլ տառերին թվանշան-
ներ (և՛ արաբական, և՛ հռոմեյական)
ու այլ նշաններ (* § () — № : , . ' ° ' ° ' °) տալու խնդիրը: Պետք է վերջ
տալ ուղեւորներն զանազան տեսակ տա-
ռերի նշաններն ու թվանշանները հա-
յերենին «հարմարեցնելու» սխեմին:

Ամեն բնույթի, ամեն դարձիկառա-
յի և կեզելի տառը պետք է ապահով-
ված լինի բոլոր անհրաժեշտ, իր վո-
ճին հարապատ նշաններով:

Մի նշանավոր պոլիգրաֆիստ առել
է, վոր հարուստ է այն տպարանը,
վոր քիչ տեսակ տառեր ունի, բայց
տպարանը կազմված է դարձիկառա-
յով:

Առանց դարձիկառա մտցնելու հա-
յերեն տառերի ձևափոխումը չի կարող
բավարարել գրքին ՎՃՆ տալու կարե-
վոր պահանջը:

Դարձիկառայի կիրառումով հայե-
րեն գրքի արտաքինը կիրկենք տառ-
երի նկար, տարբեր բնույթ ունեցող
շարվածքից. գիրքը կստանա վորոշ
ձև, վորոշ վոճ ու կուտուրական կեր-
պարանք:

Այս կենսական պրոբլեմը ուղեւորեն
տառերի նկատմամբ արդեն լուծվել է
Հոկտեմբերյան հեղափոխությունից
հետո:

Դարձիկառայի մի նմուշ բերենք
ուղեւորեն տառերից.

Реформа армянского шрифта
 Реформа армянского шрифта
 Реформа армянск. шрифта
 Реформа шрифта
 Реформа
 Реформа
 Реформа

Այս տառերը կոչվում են акцидент-
 гротеск կաղված և դարձնում են
 սկզբունքով: Առաջին տողը կեզել 6-ի
 3-ի, 2-րդը՝ 8-ի, 3-րդը՝ 10-ի, 4-րդը՝
 12-ի, 5-րդը՝ 16-ի, 6-րդը՝ 20-ի,
 7-րդը՝ 24-ի և 8-րդը 36-ի: Գարնի-
 տուրան խոշոր ու լրիվ չափով ոժան-
 դակում և չարվածքին վրն տալու
 գործին:

Նույնպես առաջարկության կարգով
 մի վերջին հարց:

Մեր դանդաղ տեսակ, դանդաղ
 բովանդակություն ունեցող գրքերը
 չարում ենք համարյա մի տեսակ տա-
 ոսով:

Թվում է այս խնդիրը ևս պետք է
 կարգավորել այսպես:

Դասադրքի տարբեր տարիների,
 տարբեր առարկաների չարվածքը
 պետք է լինեն նախորդը վորոչված
 (ստանդարտ) տառով, գիտական-
 պատմական - ուսումնասիրական գրք-
 քերը տարբեր տառով, գեղարվեստա-
 կանը՝ ուրիշ, վոտանավորները, ման-
 կականը, պատանեկականը և այլն,
 և այլն - տարբեր տառերով:

Քանի վոր դեռևս չի մշակված տա-
 ուերը, չի վորոչված նրանց բնույթը՝
 չենք կարող այս հոգվածում ցույց
 տալ, ընտրել նրանց տեսակները: Այս
 խնդիրը մենք դնում ենք այն նպատա-
 կով, վոր առաջիկայում նոր ձևի տա-
 ուեր մշակելիս գրքի բովանդակության
 համապատասխան տառ նկարելու խըն-
 դիրն ևս դրվի որակարգում:

Հայերեն տառերի ձևը բարեփոխե-
 լու խնդրով նորից պետք է գբաղվի
 ՀՍՍՀ Լուստողկոմատն այն վճռակա-



М. Э п р и к
 О РЕФОРМЕ АРМЯНСКОГО ШРИФТА
 (Конспект)
 Эривань 1931

2013



